ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/5»

ք. Երևան «25» «հունվարի» 2021թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լոկատոր» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է քաղաքաշինության և հողօգտագործման ոլորտներում իրականացվող հսկողությանը վերաբերող աշխատանքների կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 ԿԱՏԱՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 ԿԱՏԱՐՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 6070000 (վեց միլիոն յոթանասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի (համաձայնագրի) վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով

նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության

օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.12 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.13 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության աշխատակազմը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Լոկատոր» ՓԲԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	Ք.Երևան, Կոմիտաս 36ա-22
ՀՎՀՀ 02593108	«Արդշինբանկ» ՓԲԸ
	Հ/Հ 2474703386220000
	ՀՎՀՀ 00095651
Է. Կիրակոսյան ----------	Ա. Խաչատրյան----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 1
«25» «հունվարի» 2021թ. կնքված
«ԵՔ-ԲՄԾՁԲ-21/5 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	72261100	ներկայացված է ստորև	դրամ	6070000	1	ք.Երևան, Փ.Բուզանդի 1/3	Ֆինանսական միջոցներ հատկացվելուց հետո կնքվելիք համաձայնագիրը օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց 21 օրացուցային օր հետո, մինչև 25.12.2021թ. ներառյալ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Քաղաքաշինության և հողօգտագործման ոլորտներում իրականացվող հսկողությանը վերաբերող աշխատանքների կառավարման համակարգի (այսուհետ՝ Համակարգ) սպասարկման ծառայության ձեռքբերման

Քաղաքաշինության և հողօգտագործման ոլորտներում իրականացվող հսկողական գործառույթների պատշաճ կազմակերպման համար նախատեսվում է իրականացնել առկա 153 պլանշետների, դրանց շահագործումը ապահովող ծրագրային համակարգի և սերվերի սպասարկում՝ (այսուհետ՝ Համակարգ) սույն տեխնիկական բնութագրով նախատեսված պայմանների ու պահանջների համաձայն:

- Համակարգը նախատեսվում է շահագործել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հետևյալ երկու ստորաբաժանումների՝ Քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության, Հասարակական կարգի պահպանության ծառայության և Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումների (այսուհետ՝ Համակարգը շահագործողներ) կողմից՝

Համակարգի սպասարկումը ներառում է

1. Սերվերի սպասարկում,
2. Web ծրագրային համակարգի սպասարկում,
3. Մոբայլ հավելվածի սպասարկում,
4. Համակարգերի ինտեգրում,
5. Ծրագրային թարմացումներ,

6. Ուսուցում,

1. Սերվերի սպասարկում

Սերվերի սպասարկումը ներառում է՝

1.1 Ընթացիկ աշխատանքներ՝ Համակարգի անխափան աշխատունակության ապահովման նպատակով,
- Օպերացիոն համակարգի, նրա կոմպոնենտների և սպասարկող ծրագրերի պարբերական թարմացում,
- Սերվերի ադմինիստրավորում,
- Սերվերի աշխատանքային պարամետրերի մոնիթորինգ:

1.2 Անվտանգության ապահովում
- Օպերացիոն համակարգի, նրա կոմպոնենտների և սպասարկող ծրագրերի պարբերական թարմացումների իրականացում՝ անվտանգության ապահովման նպատակով,
- Չարտոնված մուտքերի փորձերի մոնիթորինգ,
- Պարբերաբար իրականացվող անվտանգության աուդիտ,

1.3 Արխիվացում

Տվյալների հենքի պարբերաբար արխիվացում:

2. Web ծրագրային համակարգի սպասարկում

Web ծրագրային համակարգի սպասարկումը ներառում է ծրագրի ֆունկցիաների անխափան աշխատանքի ապահովում և բարելավում:

Համակարգի ծրագրային ապահովումը պետք է թույլ տա էլեկտրոնային եղանակով հետևել վերահսկման աշխատանքների իրականացմանը և կառավարել այն: Ծրագիրը պետք է ներառի բոլոր անհրաժեշտ ֆունկցիաներն ու ծրագրային գործիքները վերոհիշյալ աշխատանքների իրականացման համար, լինի արագագործ, ունենա օգտագործողին հարմար ինտերֆեյս:

Ծրագիրը պետք է ապահովի հետևյալ հիմնական գործառույթները՝

2.1 Տվյալների մուտքագրման մաս.

- Համակարգը շահագործողների տվյալների մուտքագրման հնարավորություն,
- Համակարգը շահագործողների իրավասությունների հիերարխիկ սահմանման հնարավորություն,
- Աշխատանքային գրաֆիկի մուտքագրման հնարավորություն,
- Ներկայումս գործող այլ տվյալների բազաներից անհրաժեշտ տվյալների մուտքագրման հնարավորություն:

2.2 Աշխատանքների պլանավորման մաս.

- Էլեկտրոնային տեսքով առաջադրանք ստեղծելու հնարավորություն,
- Ստեղծված առաջադրանքներում աշխատանքի ծավալի, կատարողի, ժամկետների փոփոխման հնարավորություն:

2.3 Աշխատանքների կատարման մաս.

- Առաջադրանքների ցանկի ցուցադրում,
- Առաջադրանքն ընդունելու և կատարելու հնարավորություն,
- Առաջադրանքին վերաբերող մանրամասների, և տվյալ տարածքին վերաբերող այլ տվյալների դիտման հնարավորություն,
- Շրջայցի ժամանակ տվյալ տարածքում նախկինում հայտնաբերված և չվերացված խախտումների ցուցադրում,
- Առաջադրանքի իրականացման գործընթացը Համակարգում գրանցելու հնարավորություն,

- Շրջայցի արդյունքում հայտնաբերված խախտումները Համակարգ մուտքագրելու հնարավորություն,
- Շրջայցի ավարտը ղեկավարի կողմից հաստատելու հնարավորություն
- Կառուցապատողներին և նրանց տրամադրված՝ շինարարության և/կամ քանդման թույլտվություններին ու մյուս քաղաքաշինական փաստաթղթերին վերաբերող տվյալների, մուտքագրման բազմաբնույթ հնարավորություններ,
- Շինարարության և/կամ քանդման թույլտվությունների ժամկետների խախտման դեպքում, կառուցապատողին ծանուցելու անհրաժեշտության գեներացում ու ցուցադրում՝ Համակարգը շահագործող համապատասխան աշխատակցին ու նրա անմիջական ղեկավարին,
- Կառուցապատողին ուղարկված ծանուցումներին վերաբերող տվյալների մուտքագրում:

2.4 Հաշվետվական մաս.

- Հաշվետվություն՝ Աշխատակիցների ամսական հաշվետվություն
- Հաշվետվություն՝ Ըստ շրջայց կատարած տարածքների
- Հաշվետվություն՝ Տեղեկատվություն - ըստ շրջայցի կոորդինատների
- Հաշվետվություն՝ Տեղեկանք - ըստ կառուցապատման տարիների և կարգավիճակների
- Հաշվետվություն՝ Տեղեկանք - ընթացիկ շինարարությունների մասին
- Հաշվետվություն՝ ՑԱՆԿ - ձևակերպված ավարտական ակտերի
- Հաշվետվություն՝ Ավարտական ակտերի վերաբերյալ վիճակագրական կոմիտեին տրվող Տեղեկատվություն
- Հաշվետվություն՝ Ցանկ - Բնակելի շենքերի համար առանց շահագործման թույլտվության ձևակերպված ավարտական ակտերի
- Հաշվետվություն՝ ՑԱՆԿ - Բնակելի շենքերի համար ձևակերպված ավարտական ակտերի և շահագործման թույլտվությունների
- Հաշվետվություն՝ ՏԵՂԵԿԱՆՔ – ձև N 2-5 ձևաթուղթ ունեցող օբյեկտների մասին
- Հաշվետվություն՝ ՏԵՂԵԿԱՆՔ – տրված թույլտվությունների և կառուցապատման ծավալների մասին
- Հաշվետվություն՝ ՏԵՂԵԿԱՆՔ - բացակայող մակերեսով օբյեկտների մասին
- Հաշվետվություն՝ ՏԵՂԵԿԱՆՔ – շինարարությունների մասին՝ ըստ Վ/Շ և կարգավիճակների
- Հաշվետվություն՝ ՏԵՂԵԿԱՆՔ – ՎԻՎ արձանագրությունների քանակի մասին (154.1, 157.15, 156)
- Հաշվետվություն՝ ՏԵՂԵԿԱՆՔ – ՎԻՎ արձանագրությունների քանակի մասին (54, 48, 154)
- Հաշվետվություն՝ ՏԵՂԵԿԱՆՔ – կազմված արձանագրությունների և դրանց բովանդակության մասին
- Հաշվետվություն՝ ՏԵՂԵԿԱՆՔ - Շինարարությունների դաշտում առկա քաղաքաշինական փաստաթղթերի մասին
- Հաշվետվություն՝ ՏԵՂԵԿԱՆՔ - Ինտերակտիվ քարտեզում արտացոլված օբյեկտների մասին
- Հաշվետվություն՝ ԳԾԱՊԱՏԿԵՐ 1 – կառուցապատման օբյեկտների թույլտվությունների մասին
- Հաշվետվություն՝ ԳԾԱՊԱՏԿԵՐ 2 – կառուցապատման օբյեկտների թույլտվությունների մասին՝ ըստ վարչական շրջանների
- Հաշվետվություն՝ ԳԾԱՊԱՏԿԵՐ 3 – շինարարության թույլտվությունների տեսակարար կշիռն՝ ըստ Վ/Շ

3. Մոբայլ հավելվածի սպասարկում

Մոբայլ հավելվածի սպասարկումը ներառում է ծրագրի ֆունկցիաների անխափան աշխատանքի ապահովում և բարելավում:

Ծրագրային ապահովումը պետք է թույլ տա Համակարգը շահագործողներին՝ էլեկտրոնային եղանակով իրականացնել իրենց պարտականություններով սահմանված գործառույթները: Ծրագիրը պետք է ներառի բոլոր անհրաժեշտ ֆունկցիաներն ու ծրագրային գործիքները

վերոհիշյալ աշխատանքների իրականացման համար, լինի արագագործ, ունենա օգտագործողին հարմար ինտերֆեյս

- Հավելվածը պետք է ունենա նոր տարբերակի հայտնվելու դեպքում ավտոմատ թարմանալու հնարավորություն, առանց Play Store –ում տեղադրելու

3.1 Ծրագիրը պետք է ապահովի հետևյալ հիմնական գործառույթները.

- Ստացված և ընդունված հանձնարարականների դիտում
- Հանձնարարականների կատարում,
- Համակարգը շահագործողներից յուրաքանչյուրի հետագծի և իրականացված շրջայցերի (կամ տեղատեսությունների) բոլոր կետերի համեմատում,
- Հանձնարարականի ավարտում,
- Հայտնաբերված իրավախախտումների էլեկտրոնային գրանցում,
- Հայտնաբերված, բայց դեռ չարձանագրված, իրավախախտման հետևանքների վերացման դեպքում իրավախախտման վերացում, վերացված դեպքի վերաբերյալ ինֆորմացիայի պահպանմամբ
- Առկա իրավախախտումների համար կրկնակի իրավախախտման արձանագրման հնարավորություն
- Շինարարական օբյեկտի կոորդինատների, հասցեների և լուսանկարների հավաքագրում,
- Համակարգով նախատեսված ծանուցումների ստացում և մուտքագրում,
- Համակարգ մուտքագրված ցանկացած շինարարական կամ իրավախախտման օբյեկտի կոորդինատները ցուցադրող և այլ տեղեկություններ պարունակող քարտեզի դիտում,
- Համակարգում առկա և կառուցապատման փուլում գտնվող ցանկացած օբյեկտի հասցեի փնտրում:

4. Համակարգերի ինտեգրում

4.1 Համակարգը սպասարկողը պետք է իրականացնի GPS, մոբայլ և Web համակարգերի ինտեգրում՝ մասնավորապես.

- Նշված համակարգերի միջև տվյալների փոխանակում,
- Ստացված տվյալների հիման վրա հաշվետվությունների գեներացում,
- GPS համակարգից ստացված տվյալների ցուցադրում մյուս համակարգերում:
- Քաղաքապետարանի պաշտոնական կայքի հետ ինտեգրում, շինարարական թույլտվությունների և իրականացվող շինարարությունների վերաբերյալ տվյալների փոխանցման և ֆիլտրման հնարավորությամբ

Անհրաժեշտության դեպքում, Համակարգը սպասարկողը, պետք է նաև ապահովի շահագործվող ծրագրերի ինտեգրումն այլ համակարգերի հետ:

5. Ծրագրային թարմացումներ

Համակարգը սպասարկողը՝ գնման պայմանագրով նախատեսված ողջ ժամկետում, պատվիրատուի պահանջով պետք է իրականացնի.

- Գործող համակարգչային ծրագրի նշանակությանը համապատասխան՝ նոր ֆունկցիաների ավելացում, (ժամկետները համաձայնեցվում են պատվիրատուի հետ)
- Առկա ֆունկցիաների կատարելագործում:

6. Ուսուցում

Համակարգի սպասարկմանը զուգահեռ, անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել Համակարգը շահագործողների ուսուցում, ինչպես նաև տրամադրել տեխնիկական և խորհրդատվական աջակցություն:

Ուսուցմանը զուգահեռ, Համակարգում անհրաժեշտ է ստեղծել օգնության բաժին, որտեղ ներառված կլինի համակարգից օգտվելու համապատասխան ուղեցույցեր:

Սպասարկման պայմաններ

Սպասարկողը պետք է տրամադրի ՀՀ-ի մանրակրկիտ էլեկտրոնային քարտեզ և ք. Երևանի հասցեների բազան, որոնք սպասարկման ամբողջ ընթացքում պետք է գտնվեն համակարգի հետ ֆիզիկապես նույն սերվերի վրա և կիրառվեն համակարգում, ինչպես WEB համակարգում, այնպես էլ մոբայլ հավելվածում:

Համակարգի սպասարկման ծառայության ձեռքբերման մասնակիցը պետք է ունենա կառավարման համակարգերի մշակման, սպասարկման և ինտեգրման փորձ:

Սպասարկողը պարտավոր է՝

Համակարգի սպասարկումն իրականացնել մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ 7/24 ռեժիմով,

- Նոր ծրագրային գործիքներ ստեղծելիս՝ դրանց աշխատանքի սկզբունքները և ձևաչափերը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ,
- Պարբերաբար թարմացնել հասցեների բազան, չխախտելով բազայի կառուցվածքը,
- Համապատասխան մրցույթի արդյունքում կնքված գնման պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում՝ Համակարգի շահագործման ընթացքում ցանկացած ծրագրային թերության ի հայտ գալու դեպքում, այն կարգավորել և/կամ վերականգնել, թերության ի հայտ գալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան ք. Երևան, Արգիշտիի փ. 1 ՀՎՀՀ 02593108	«Լոկատոր» ՓԲԸ Ք.Երևան, Կոմիտաս 36ա-22 «Արդշինբանկ» ՓԲԸ Հ/Հ 2474703386220000 ՀՎՀՀ 00095651
Է.Կիրակոսյան ---------- (ստորագրություն) Կ.Տ	Ա.Խաչատրյան---------- (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 2
«25» «հունվարի» 2021թ. կնքված
«ԵՔ-ԲՄԾՁԲ-21/5» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
« 25 » «հունվարի» 2021թ. կնքված
«ԵՔ-ԲՄԾՁԲ-21/5» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն